յիշատակ։ Տացէ և զանձն իւր աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն՝ սրբութեամբ, արդարութեամբ, հնազանդութեամբ, խոնարհութեամբ, և յամենայն գործս առաքինութեան, առնելով ինքն և ապա ուսուցանել ձեզ առնել. Պահեսցէ զանձն իւր անբանբաս առ մարդիք և անդատապարտ առ Աստուած։ Կալցի առաքելաբար իշխանութիւն ի վերա ձեր՝ կապելոյ և արձակելոյ ի յերկինս և ի յերկրի. զմեղուցեալսն և զամբաստամբեալսն յաւրինացն Աստուծոյ և ի կանոնաց սուրբ եկեղեցւոյ և զհակառակաւղսն՝ իրաւամբք խրատել, սաստել, կշտամբել և յանդիմանել զմեղս, մինչեւ զղջասցին և ցուցանեն պտուղս ապաշխարութեան և հնազանդութեան, մինչեւ դարձցի ի շարէ։ — Կոչեսցէ զարժանաւորսն բազում քննութեամբ ի կարգ և յաստիճան կիսասարկավագութեան, սարկաւագութեան և քահանայութեան, ի սպասաւորութիւն աստուածային խորհրդոյն, և ի տեսչութիւն ժողովրդեանդ։ Եւ ի վերա այսր ամենայնի լիցի այցելու որբոց և այրեաց, աղքատաց և կարաւտելոց. ամենեցուն լիցի կարէկից սիրովն Քրիստոսի։ Պահեսցէ հաւատարմութեամբ և արդեամբք հնազանդութիւն առ սուրբ աթոռս, (ինքն) և յայլորդք իւր։ — Որով և դուք ամենեքեան՝ հոգեւոր որդիք մեր առ հասարակ ի Քրիստոս, զաստուածապատիւ և զառաքելաշնորհ սրբազան արքիպիսկոպոսդ ձեր ըզՏէր Գրիգորդ՝ զիմ սիրելի որդեակդ, յոյժ սիրով և մեծաւ պատուով ընկալարուք, որպէս քաջ սիրելի որդի մեր, և հրեշտակ Աստուծոյ, և որպէս առաքելական այր, ի դրանէ սուրբ աթոռոյս առ ձեզ առաքած. և ամենայն հոգևորական խրատու դորա որ ի շահ և յաւգուտ լիցի ոգոց ձեր, հնազանդութեամբ ունկնդիր լերուք, որպէս իմոյ անձինս, սիրով Հոգւոյն Սրբոյ։

Այլ և զամենայն կանոնեալ հաս և զիրաւունս աթոռոյ, զհաս տանց քահանայից և զընտանեաց նոցա, և զերախայրիս կալոց և հնծանաց, զարբանուէրսն և զտեառնականսն, և զիրաւունս մատղաց կարգաւորաց, յանկարծամահից և կենդանեաց, և զայլ ամենայն իրաւունս կենաց և մահու, անթերի և առանց տրտնջման, զուարթ և առատ սրտիվ տուք ի ձեռն դորա։ Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ կամ դիմադարձ լիցի սմա և հրամանիս մեր, կամ յայլազգի մատնել, կամ խորել յիրաւանց. և մի ոք իշխեսցէ ի քահանայից՝ հակառակ լինել այսմն հրամանի, և կամ այլ եպիսկոպոսի բարէկամ լինել, և կամ հակառակ դմա. զի որ ոք լիցի, մեր հայրապետութեան հրամանաւս՝ նայ ի կարգէ լուծել ենք և բանադրել. և զարձակումն՝ ի Տէր Գրիգորէ առցէ, նոյն և թէ աշխարհական լինի. զի որ զայս արասցէ՝ կրեսցէ անիծիւք զպատիժն Կորխա և Դադանա, զԿայէնի և զՅուդայի. և հնազանդեալքդ՝ աւրհնեալ եղիցին։ Որով աւրհնեալքդ ի յարքեպիսկոպոսէդ ձեր ի Տէր Գրիգորէդ՝ աւրհնեալ եղիցիք յԱստուծոյ և ի մէնջ. կապեալքն և աւրոշեալքն՝ ի նմին մնասցեն, և մինչեւ հնազանդութեամբ զղջասցին։ — Վասն որոյ ի մտանել դորա և գրավորական աւրհնութեան հրամանիս մեր առ ձեզ, իջցէ և շնորհք ողորմութեան Աստուծոյ յերկնից ի